ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«05» օգոստոսի 2013թ. N 327

ք. Արմավիր

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի „բ" ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 4-ի թիվ 764-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2013 թվականի հուլիսի 12-ի թիվ 022/6491-13 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի սահմանած <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցանակի համար մրցույթի մարզային փուլում հաղթող ճանաչված 12 ընտանիքների՝ 2013 թվականի օգոստոսի 19-25-ը Ծաղկաձոր քաղաքում անցկացվելիք եզրափակիչ փուլին մասնակցությունը կազմակերպելու նպատակով՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից 2013 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին <<Այլ ընթացիկ դրամաշնորհներ>> հոդվածով նախատեսված գումարից <<Արմավիրի մարզի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն>> հասարակական կազմակերպությանը հատկացնել 1 000 000 /մեկ միլիոն/ դրամ դրամաշնորհ՝ ընտանիքների և մարզի ներկայացուցչի մարզահագուստի ձեռքբերման նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին (Փ. Կարապետյան) սահմանված կարգով իրականացնել գումարի հատկացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ